ՀԱՅԿՈՒՇ ԴԱԴԱՇԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

(1919–2005)

ՀՏԴ: 929:02(479.25)
Դանիելյան+02

Հայաստանի գրադարանային ոլորտի պատմության մեջ ճանաչված և մեծ վաստակ ունեցող անուն է Հայկուշ Դանիելյանը:

Ծնվել է 1919 թ. Բաքվում: Միջնակարգ կրթություն ստանալուց հետո 1940 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, որն ավարտել է 1945 թ.՝ ստանալով պատմաբանի մասնագիտություն: Աշխատանքային գործունեությունը սկսել է ՀԼԿԵՄ Կենտկոմից (1945-1953 թթ.), եղել է Ղափանի /այժմ՝ Կապան/ շրջգործկոմի կուլտուրայի բաժնի վարիչ (1953-1961 թթ.), ՀՍՍՀ Կուլտուրայի մինիստրության կադրերի բաժնի վարիչ, երաժշտական բաժնի պետ (1961-1969 թթ.): 1969-1996 թթ. զբաղեցրել է Խնկո Ապոր անվան հանրապետական մանկական գրադարանի տնօրենի պաշտոնը, այնուհետև աշխատանքային գործունեությունը շարունակել է հարազատ գրադարանում՝ որպես փոխտնօրեն (1996-2000 թթ.), տնօրենի խորհրդական (2000-2005 թթ.): 27 տարի ղեկավարել է Խնկո-Ապոր անվան հանրապետական /այժմ՝ ազգային/ մանկական գրադարանը, 36 տարի աշխատել է նույն գրադարանում:

Աշխատանքային բեղուն գործունեության արդյունքում պարգևատրվել է «Կարմիր դրոշ», «Պատվո նշան» շքանշաններով, «Հայ-

ռենական մեծ պատերազմի տարիներին թիկունքում ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար» մեդալով, ԽՍՀՄ և Հայաստանի Գերագույն խորհրդի և մինիստրությունների, ՀամԼԿԵՄ Կենտկոմի մեդալներով, բազմաթիվ պատվոգրերով: Մշակույթի բնագավառում երկարամյա, անբասիր աշխատանքի համար արժանացել է ՀՍՍՀ կուլտուրայի վաստակավոր գործչի կոչման (1972 թ.), իսկ ծննդյան 85-ամյակի առթիվ պարգևատրվել է Ազգային գրադարանի «Հակոբ Մեղապարտ» մեդալով (2004 թ.): Հիշյալ ձեռքբերումներն ու պարգևները սոսկ փաստերի թվարկում չեն. Հայկուշ Դանիելյանը հանրությանը հայտնի է իր գրադարանաշինական գործունեությամբ, գրադարանային գործի զարգացմանը նպաստող բեղուն աշխատանքով:

Նրա անմիջական ջանքերով և հետևողականությամբ 1980 թ. հանրապետության բոլոր երեխաներին մեծ նվեր մատուցվեց. շահագործման հանձնվեց գրադարանի նորակառույց տիպային շենքն՝ իր յուրահատուկ ձևավորմամբ ու կահավորանքով. այն իր տեսակով ԽՍՀՄ մյուս հանրապետությունների մանկական գրադարանների տնօրենների «բարի նախանձն» էր շարժում:

Չհանդիսանալով գրադարանային ոլորտի մասնագետ՝ ղեկավարին հատուկ վճռականությամբ ու կազմակերպվածությամբ նա կարճ ժամանակում տիրապետեց ոլորտի նրբություններին և նախաձեռնեց ծավալուն աշխատանքներ ողջ հանրապետության տարածքում՝ շրջանային, քաղաքային, հանրապետական սեմինարներ, գիտաժողովներ, հոբելյանական հանդիսություններ: Իրենց տեսակով և ծավալով հատկապես առանձնանում են Մանկապատանեկան գրքի համամիութենական շաբաթը (1982 թ.), ԽՍՀՄ և ՀԽՍՀ կուլտուրայի մինիստրությունների համագործակցությամբ անցկացված Համամիութենական գիտագործնական կոնֆերանսը (1983 թ.), ինչպես նաև Հայաստանի դպրոցական գրադարանների համար նախատեսված 5-օրյա սեմինար-խորհրդակցությունը՝ 300 մասնակցով:

Մեծ է նաև նրա ավանդը գրադարանի մեթոդական, մատենագիտական նյութերի հրատարակման գործում: Խմբագրել է մեթոդական նյութեր, հանձնարարական ցանկեր, հիշարժան տարեթվերի օրացույցներ, մատենագիտություններ. դրանց թվում հատկապես արժեքավոր են «Մանկական թարգմանական գրականության մատենագիտություն»-ը (1972 թ.), «Հասկեր» (1981 թ.), «Աղբյուր» (1987 թ.), «Պիոներ» (1978 թ.) ամսագրերի մատենագիտությունները:

Լինելով խստապահանջ ղեկավար՝ միաժամանակ հոգատար էր աշխատողների նկատմամբ, գնահատում էր բոլորի մասնագիտական հմտությունները՝ վեր կանգնելով միջանձնային տարաձայնություններից: Հարգված ու սիրված էր աշխատակազմի կողմից. բոլորը գիտեին՝ խիստ ու չոր խոսքերի ետևում բարի սիրտ էր թաքնված:

Տարիների իր գործը Հայկուշ Դանիելյանը փոխանցեց նոր տնօրեն Ռուզան Տոնոյանին, որը ոչ միայն շարունակեց, այլև ավելի ընդարձակեց ու բարեփոխեց գրադարանը ժամանակի նոր պահանջներին համաձայն: Վերջինիս նախաձեռնությամբ ու անմիջական ջանքերով 2004 թ. գրադարանում մեծ շուքով նշվեց Հայկուշ Դանիելյանի ծննդյան 85-ամյակը: Ներկա գտնվողները՝ գրողներ, արվեստագետներ, գրադարանային աշխատողներ, գնահատանքի ու շնորհավորանքի ջերմ խոսքեր հնչեցրին հոբելյարի հասցեին: Մեկ տարի անց նրա վերջին հրաժեշտը եղավ իր սիրելի գրադարանի շենքում:

Շատ բան կարելի է ասել, սակայն կարծում եմ՝ արդեն իսկ պարզ է նրա անուրանալի վաստակը մշակույթի, հատկապես գրադարանային ոլորտի զարգացման գործում:

Այդպիսին էր նա՝ գործունյա, աշխատասեր, եռանդուն, մինչև վերջ իր գործին նվիրված Հայկուշ Դադաշի Դանիելյանը:

ՄԱԴԼԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան